Սրա այլ ապացույցները տալիս են օրհնանքնէրը և բարի մաղթանքնէրն ու անէծքնէրը, որոնցով կարելի էր մի կողմից խրախուսել լույսի, գիշերվա («բարի լո՜ւյս», «բարի գիշե՜ր», «բարի հաջողո՜ւմ») ու ամեն աշխատանքի նպաստավոր ընթացքը կամ ընդհակառակն՝ առաջ բերել վնասում և ապաբախտություն՝

«Ջէռքըտ չօրանա՜»։

Հմայիլնէրը մեծ տարածում ունեին նաև սեր, ատելություն, միացնելու, անջատելու, զզվանք, խելագարություն, մահ և այլ չարիք կամ բարիք հարուցանելու նպատակներով։ Սակայն օրհնանքի կամ անեծքի խոսքերի ուժը կախված էր արտասանողից. այսպես՝ առանձին էֆեկտիվությամբ ազդելու զորություն վերագրվում էր քահանայի կամ մոլլայի խոսքերին, իբրև նախնական կախարդի կերպարի վերապրուկի։ Այս զորությունը տարբեր էր բաշխված և հասակների մեջ, նույնիսկ սեռերի մեջ՝ ծերերի և պառավների, տղամարդու և կնոջ օրհնանքն ու անեծքը ավելի զորավոր էին, քան թե ավելի երիտասարդ տարիք ունեցողներինը, կանանցն ավելի, քան տղամարդկանցը։

Հավատում էին, որ բոլոր մարդիկ օժտված էին ուրիշների գործերի վրա ազդելու ունակությամբ, ունեին մի շնորհք՝ «մանա», որը, սակայն, հավասարապես բաժանված չէր բոլորի մեջ։ Այսպես, կային և մարդիկ, որոնք ունեին թէթէվ ձէռք: Թէթէվ ձէռք ունեցողին էին դիմում, օրինակ՝ մեղրը փեթակից հանելիս կամ նոր փեթակի մեջ նոր մայր մեղու նստեցնելու միջոցին, շատ անգամ նոր տուն շինելիս՝ հիմքի առաջին քարը դնելիս։ Կան և թեթև ու ծանր՝ բարի ու չար ոտք ունեցող մարդիկ։ Վերջիններից, մանավանդ, վախենում էին երկուշաբթի օրը, չլինի՞ թե նրանց ներգործության տակ ամբողջ շաբաթն անհաջող անցնի։ Ձախի և աջի մեջ տարբերություն էր դրվում։ Ձախ աչքով նայել, նշանակում էր ճիշտ չհասկանալ, ճիշտ չտեսնել և նույնիսկ անբարյացակամ ազդել։ Ձախ ձեռքով մի բան մատուցանել՝ դժկամությամբ մատուցած էր համարվում, ինչպես ձախ ձեռքով շինածն անբավարար և անփույթ շինած։ Ձախ ոտքով առավոտյան անկողնուց վեր կենալն ամբողջ օրը գործերի անհաջողություն էր նշանակում։ Տան փոքր հարսը կամ աղջիկը մեծերի կամ հյուրերի ոտքերը լվանալիս պիտի աջ ոտից սկսեին։ Այսպիսով, մարդու մարմնի մասերին ևս հատկացվում էր տարբեր զորություն—աչքը, ձեռքը, ոտքը, աջն ու ձախը, ինչպես և մարդու խոսքը՝ բանավորը թե գրավորը, ամեն մարդու մեջ ունեն տարբեր զորություն, այսպես ասած՝ բնությունից ստացած։ Այս կարգի տարբերությունն է նաև մեկի՝ մի այլ մարդու գործունեության վրա լավ կամ վատ ազդելը։ Մարդուց մի հատկություն կարող էր այս կամ այն եղանակով անցնել մյուսին, վարակիչ լինել[126]։ Այսպես, օրինակ, չբերությունը կամ բազմածնությունը, որը կարող էր անցնել մեկից մյուսին՝ շրջապատը, վարակիչ էր։ Չբեր կին ունեցող մեկը չպիտի դուրս բերի փարդայի հետևից նորահարսին և կանգնեցնի փեսացուի կողքին, որպեսզի նրա չբերությունը չանցնի պսակվողին։ Այն տանից, որտեղ կինը երկվորյակ է ծնած եղել, հաց էին վերցնում երեխային նրա մեջ շինած ծակով անցկացնելու համար։ Նորահարսի ծնկներին նստեցրած տղան իր տղայությունը կարող էր հաղորդել ամուսնությունից սպասվող ծնունդին։ Այսպիսով կարելի էր իր սեռային հատկությունն էլ տալ ուրիշին, նույնիսկ կենդանուն։ Եթե հավին թուխս նստեցնելիս ներս մտներ մի կին՝ ձվից պիտի դուրս գային վառեկներ, եթե մի տղա-

126 Կոնտագիոզ կամ վարակիչ մագիա։